ՊՈՒՇԿԻՆ ԿԱՐԱԳՈՒ ՀՈՒՇԱՐԱՆԸ ՊՈՒՇՔԻՆՍԿԱՆՈՒՄՆԻ ՀԵՌՈՒՄԻՆԿՍ
ԱՍՄՈՒՊՔԻՍՈՒՆ ԵՎ ՊԱՀԱՐԻՄԻՆ ԿՏՈՒՆԻՄ ՎՍ ՊԱՀԱՊԱՔԱՐԻՄ ԱՍՈՒԱՔՍՆ ԿՍՍՔՈՒ ՀԵՌՈ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՈՆԻԴ ԿՈՒՉՄԱՅԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ:

Նորին Սրբությունը ողջունելով նախագահի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ ուրախություն հայտնեց երկու երկրների միջև բարեկամական կապերի ամրապնդման համար. «Մեզ համար մեծ ուրախություն ու մխիթարություն է տեսնել ջերմ, եղբայրական հարաբերությունները մեր երկրների միջև, որ զարգանում են նախագահների մակարդակով»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետը միաժամանակ երախտագիտություն հայտնեց Ուկրաինայի պետությանն ու նախագահին այն ազնիվ ուշադրության համար, որ ցուցաբերվում է հանդեպ Ուկրաինայի հայազգի քաղաքացիները, և որի վկայությունն է Ուկրաինայի խորհրդարանում հայազգի պատգամավոր Նվեր Մխիթարյանի ներկայությունը:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց նաև անցած տարի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով նախագահի կողմից իրեն տրված բարձր պարգևի՝ Ուկրաինայի պետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» շքանշանի համար:

Պատասխան խոսքում պրն Կուչման նշեց, որ իր համար մեծ պատիվ է գտնվել հայոց սրբավայրում. «Մենք հասկանում ենք, թե ինչ նշանակություն ունի Եկեղեցին երկրի հոգևոր կյանքի զարգացման համար: Ես բարի նախանձ եմ տածում Հայաստանի հանդեպ, որի Եկեղեցին աջակից է պետությանը՝ ի շահ իր երկրի և ժողովրդի բարգավաճման»,- ասաց Ուկրաինայի նախագահը:

Անդրադառնալով Ուկրաինայի կրոնական կյանքին՝ պրն Կուչման նշեց, որ դրական լուծում են գտնում հայկական եկեղեցիների և եկեղեցաշինության հետ կապված բոլոր խնդիրները, մասնավորապես Լվովի հայկական եկեղեցու ամբողջական վերադարձը հայոց թեմին, ինչպես նաև Կիևում հայկական նոր եկեղեցու կառուցման նպատակով հողահատկացման հարցը:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետն իր օրհնությունը տվեց Ուկրաինայի ժողովրդին ու նախագահին՝ մաղթելով բեղմնավոր գործունեություն՝ ի բարգավաճում Ուկրաինայի պետության և ժողովրդի:

Հանդիպմանը ներկա էին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, եպիսկոպոսաց դասի ներկայացուցիչներ, պետական պաշտոնյաներ, երկու երկրների դեսպանները: